# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» օգոստոսի 2017 թվականի N 153

Արմավիրի մարզպետ պարոն
Աշոտ Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Համաձայն Ձեր 17.03.2009թ. թիվ 600 գրության Ձեզ է ներկայացվում 2017 թվականի հուլիս ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում ընդունվել է 3 որոշում, արձակվել է 1 կարգադրություն :

Առդիր 5 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

03.08.2017թ. գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«06» հուլիսի 2017 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 53

ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի առաջին մասով

Որոշում եմ՝

1. 2017 թվականի օգոստոսի 08-ին ժամը 12-ին կազմակերպել և անցկացնել մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

2. Աշխատակազմի քարտուղարին (Ա. Միլիտոնյան) օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել անցկացվելիք մրցույթի մասին համապատասխան հայտարարության հրապարակումը azdarar.am կայքում:

3. Մրցույթի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել աշխատակազմի քարտուղար Ա. Միլիտոնյանին:

4. 2017 թվականի ապրիլի 10-ին ժամը 14–ին կազմակերպել և անցկացնել Արմավիրի մարզի Հացիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-2) ատեստավորում:

5 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

06.07.2017 գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«27» հուլիսի 2017 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 54

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Վարդան Միրզոյանին պատկանող բնակելի տանը` (ծածկագիր 04-058-011-007) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 3-րդ փողոց 8 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի աշխատակազմի «Արմավիրի» սպասարկման գրասենյակ` պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. Եղիազարյան

Գ. Հացիկ 27.07.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«31» հուլիսի 2017 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 5

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 5 ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՎՀԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » օրենքի 1-ի և 2-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի և հիմք ընդունելով քաղաքացի Արևհատ Վարդանյանի դիմումը և այն,որ բնակելի տունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, չեն խանգարում այլ անձանց իրավունքներին և, հիմք ընդունելով որակավորման վկայական ունեցող ԱՁ Արծրունի Գողամյանի կողմից կատարված հողամասի , բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար հողամասի հատակագծերը հաստատված համայնքի ղեկավարի կողմից.

Որոշում եմ

1. Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 5-րդ փողոց 1 շենք 2 հասցում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արևհատ Վարդանյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.121 հա հողամասի վրա գտնվող տան և շենք-շինությունների նկատմամբ :
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայակն ունեցող ԱՁ Արծրունի Գողամյանի կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Քաղաքացի արևհատ Վարդանյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե ՀՀ Արմավիր մարզ գ. Հացիկ 5 փողոց 1 շենք 2 բնակելի տուն:

4. Առաջարկել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Արևհատ Վարդանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենքի շինությունների նկատմամբ, բնակելի տուն 36.6քմ, բնակելի տուն 27.6քմ, ծածկոց 27.3, անասնաշենք 23.4քմ, և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

Գ. Հացիկ 31.07.2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«31» հուլիսի 2017 թվականի N 04

## ՆՈՒՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշումը և ամենամյա արձակուրդների տրամադրման 2017 թվականի գրաֆիկը`

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի գրադարանավարուհի Նունե Գևորգյանին 2017 թվականի օգոստոսի 1-ից տրամադրել 2017 թվականի ամենամյա արձակուրդը` նվազագույնը 20 աշխատանքային օր և լրացուցիչ հինգ աշխատանքային օր` ընդամենը 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2015 թվականի սեպտեմբերի 5 -ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Արթուր Եղիազարյան

Գ.Հացիկ
31.07.2017թ.